№ 159 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 26 1900 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 26 № 159

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարող է օրինակ ծառայել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական գործեր. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արեւելքից Արեւմուտք։

ԿԱՐՈՂ Է ՕՐԻՆԱԿ ԾԱՌԱՅԵԼ

Ուսանելի է այն նոր կարգադրութիւնը, որ արված է ուղղափառ կրօնի դասաւանդութեան վերաբերութեամբ։ Ռուսաց Սինոդը թոյլ է տուել, որ այսուհետև ստորին դպրոցներում կրօնի դասեր տան նաև աշխարհական անձինք։

Այդպիսով դրական վճիռ է ստացել մի խնդիր, որ վաղուց հետաքրքրում էր կրօնական գործով զբաղված շրջանները։ Փորձը ցոյց տուեց, որ կրօնի դասաւանդութիւնը, յանձնվելով քահանային, ամենեւին առաջադիմութիւն չէ անում և չէ տալիս բաւարար արդիւնքներ։ Շատ տեղ էլ կան մանկավարժական ոգով և եռանդով տոգորված քահանաներ, որոնք նուիրվելին իրանց գործին սիրով և ուշադրութեամբ։ Իսկ որ ոչ պակաս կարևորն է, քահանաները, զբաղված լինելով իրանց ծխական պարտաւորութիւններով, ստիպված են շատ անգամ բաց թողնել դասերը, կամ ուշանալ այդ դասերին և առհասարակ նայել իրանց մանկավարժական գործունէութեան վրա, իբրեւ մի տաղտկալի աշխատանքի վրա։

Նոյն երեւոյթը նկատված է և մեր դպրոցներում։ Քահանան յաճախ ստիպված է լինում բաց թողնել դասերը իր ուրիշ պարտաւորութիւնների պատճառով և թերի դնվելով իր դասաւանդութեան մէջ՝ մտցնում է անկարգութիւն դպրոցական կեանքի մէջ։ Եւ արդեօք շատ ուենք կրթված և պատրաստված քահանաներ, որոնցով կարողանայինք կրօնուսոյցների կարիքը լրացնել։

Մեր ընդարձակ մտածողները առանձին նշանակութիւն են տալիս քահանայի դասաւանդութեան և աշխատում են ամեն կերպ արգելք հանդիսանալ աշխարհականներին խառնվելու ոչ միայն կրօնի դասաւանդութեանը, այլ և այնպիսի գործերին, ուր աշխարհականների մասնակցութիւնը կարևոր է տնտեսական և դրամական օժանդակութիւն ստանալու համար։ Այս վերջին տարիները, ինչպէս յայտնի է, հոգևոր իշխանութիւնը բազմաթիւ փորձեր արեց ձնշելու հոգաբարձական ընտրութիւններ անելու իրաւունքը, իսկ երբ այդ բոլորը չաջողվեց, ներկայ տարվանից ծրագրեց մտցնել աշխարհականներից կազմված հոգաբարձական մարմնի մէջ երկու քահանաներ։

Ռուսաց դպրոցների վերաբերութեամբ արած նոր կարգադրութիւնը պէտք է մեր կրթական ղեկավարների համար շատ ուսանելի լինի և աշխարհականներին հալածելու եռանդը փոքր ինչ սառեցնէ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

IX

Վերջերս մեզ աւելի եւ աւելի յաճախ է պատահում լսել դժգոհութիւն ուսանողներից եւ համալսարանականներից։

Անկասկած է, որ, գնալով, ուսանողները թէ մտաւորապէս, թէ բարոյապէս մանրանում են եւ համալսարանականների մէջ աւելանում է կարիէրիստների, եթէ կարելի է այսպէս ասել, «տաք-տեղականների» տոկոսը։

Մի ժամանակվայ պարզ, համեստ, փոքր ի չատէ ընթերցասէր եւ հասարակական հարցերով հետաքրքրվող միջին ուսանողի տեղ առաջ է եկել փքված, մեծամիտ, անզարգացած եւ անտարբեր ուսանողի տիպ։ Եւ եթէ առաջ առվորական համալսարանաւարտը, սկսելով իր նաւարկութիւնը կեանքի փոթորկալի ծովում, միայն փոքր առ փոքր եւ վտանգաւոր բռպէներին էր ծովը շպրտում իր իդէալական, պէտք է խոստովանել, թեթեւ ծանրոցը (բագաժ) եւ ժամանակի ընթացքում կորցնում գրքի ճաշակը, որ այն ժամանակ էլ շատ աչքի ընկնող չէր,—այժմեան համալսարանաւարտների մեծամասնութիւնը կեանք է մտնում բոլորովին «կազմ եւ պատրաստ» գոյութեան կուի համար, այդ բառի ամենավատ նշանակութեամբ, եւ որ, զարմանալին է, ամենամեծ յաւակնութիւններով։

«Ճանապարհ բացէք, համալսարանականը գալիս է»։

Ինչու։ Որովհետեւ նա ունի իր գրպանումը մի թղթի կտոր, որի վրա գրված է, թէ նա չորս կամ հինգ տարի լսել է համալսարանում եւ, վերջապէս, կարողացել է տալ բաւարար քննութիւն մի որ եւ է մասնագիտութիւնից։

Ի՞նչպէս է լսել,—դրա մասին ոչինչ չէ ասում այդ դիպլոմ կոչված թղթի կտորը, բայց այդ հետաքրքիր հարց է։ Ի՞նչ կը նշանակի՝ բաւարար քննութիւն է տուել,—այդ էլ հետաքրքիր հարց է։

Աշխատենք հարեւանցօրէն պատասխանել այդ հարցերին։

Վերցնենք համալսարանական բաժանմունքների երկու բեւեռները՝ բժշկականը եւ իրաւականը։

Բժիշկ ուսանողները բաւական կանոնաւոր են պարապում։ Բայց ինչով։ Միայն այն բանով, որ անպատճառ կը պահանջվի քննութիւնների ժամանակ։ Նրանք աշխատում են իւրացնել այն minimum-ը, հարկաւոր գիտելիքների այն ամենաքիչ քանակութիւնը, առանց որի նրանք չեն կարող դիպլոմ ստանալ։ Տեսական հարցեր նրանց չեն հետաքրքրում։ Գիտական փորձերով նրանք չեն զբաղվում։ Ժողովրդական բժշկականութեան ուսումնասիրութեամբ նրանք չեն հետաքրքրվում։ Զէ՞ որ այդ բոլորը դժուար է վերածել հնչուն մետալի։

Այդ դեռ իրանց մասնագիտութեան մէջ։ Բայց ինչու համար է համալսարանը, ինչ տարբերութիւն ունի նա մի առանձին բարձրագոյն ինստիտուտից կամ ակադեմիայից, եթէ նրա տարբեր բաժանմունքների մէջ չէ լինելու փոխադարձ մտաւոր—բարոյական ներգործութիւն,—եթէ նա չէ տալու ուսանողներին ընդհանուր, լայն հումանիտարական զարգացում,—մի բան, որով միայն կարող է բժիշկը տարբերվել արհեստաւորից, «փէշաքեարից»։

Պէ՞տք է ապացուցանել, որ այդ տեսակէտից մեր բժիշկների ահագին մեծամասնութիւնը ստոր է ամեն քննադատութիւնից։ Պէ՞տք է ապացուցանել, որ այդ միմիայն ռուս համալսարանի կազմակերպութեան մեղքը չէ, այլ եւ մեր մեղքը, որովհետեւ մենք մտնում ենք բժշկական բաժանմունք ոչ այն պատճառով, որ սիրում ենք բժշկական գիտութիւնը եւ ցանկանում ենք մեզ նուիրել մարդկային ցաւերը ամոքելու մեծ գործին, այլ որովհետեւ բժշկական մասնագիտութիւնը շահաւետ է, բժշկի «մազանդան» բարձր է կեանքի շուկայում, բժիշկը ցանկալի «փեսացու» է համարվում եւ այլն։

Աւելի լաւ չեն իրաւաբանական բաժանմունքի ուսանողները։ Մի փոքր աւելի ընդհանուր զարգացում եւ մի փոքր պակաս ուշադիր վերաբերմունք դէպի դասախօսութիւնները,—ահա ամբողջ տարբերութիւնը նրանց մէջ, որ առաջանում է այդ բաժանմունքներում աւանդվող առարկաների առանձնայատկութիւններից։

Նոյնն են ներկայացնում, mutatis mutandis, եւ միւս բոլոր բաժանմունքները։

Բերենք մի քանի աչքի ընկնող փաստեր։

Քանի գնում, պակասում է գիրք կարդալու սովորութիւն ունեցող ուսանողների թիւը եւ, ընդհակառակը, աւելանում է ամբողջ գիշերներ թղթախաղով լուսացնող ուսանողների թիւը եւ դրանց մէջ նրանց թիւը, որոնք ձեզ բացատրում են, թէ թուղթ խաղալը անհրաժեշտ բան է, որովհետեւ գաւառներում դա լաւ միջոց է բժշկի կամ փաստաբանի համար ծանօթութիւններ ձեռք բերելու եւ կապեր հաստատելու։

Գնալով՝ աւելի եւ աւելի աչքի է ընկնում մի երեւոյթ, — ամառները տուն վերադարձող ուսանողները, փոխանակ մի նոր հոսանք մտցնելու գաւառական բորբոսած կեանքի մէջ, զբաղվում են միայն քէֆով, թղթախաղով, ֆլիրտով եւ սպօրտով։

Աւելացրէք դրա վրա այն, որ ռուսաց համալսարաններում կան ուսանողներ, ճիշդ է սակաւաթիւ, որոնք ըէպէտիտորի օգնութեամբ են պատրաստվում քննութեան համար,—որ ուսանողների գրեթէ կէսը անկանոն է յաճախում դասախօսութիւններին եւ քննութիւնից մէկ-երկու ամիս առաջ միայն սկսում անգիր անել՝ այն էլ ոչ դասախօսութիւնները, այլ նրանցից կազմված յիժար կօնսպէկտները,—որ ուսանողների մէջ երեւան է եկել գլուխ պահելու, ապրուստ վաստակելու մի նոր միջոց, այն է՝ փողով շարադրութիւններ գրել աւարտողների համար (մենք անձամբ ճանաչում էինք մի ուսանողի, որ պարապում էր այդ արհեստով եւ բաւական փող վաստակում, շարադրութիւն ծախելով այն մարդկանց, որոնք վաղը մեծամտութեամբ պէտք է ասէին,—«ես փաստաբան եմ, ես մաթեմատիկոս եմ եւ այլն),—աւելացրէք այդ բոլորը եւ ասէք, ինչի՞ վրա են հիմնված մեր համալսարանականների յաւակնութիւնները։

Ճիշդ որ «на рубль амбиціи, на грошъ амуниціи.»

Ոչ. հայ հասարակութիւնը հիմք չունի գրկաբաց ընդունելու այդպիսի համալսարանականների։ Նրան պէտք են, նրան անհրաժեշտ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼՔԻՑ ԱՐԵՒՄՈՒՏՔ

(ճանապարհորդական տպաւորութիւններ)

I

Ինձ նորից վիճակվեց ճանապարհորդել։

Սիրում եմ ճանապարհորդել, անցնել «ընդ ծով եւ ընդ ցամաք», ինչպէս ասում էին մեր նախնիք, աշխարհ տեսնել, նոր տպաւորութիւններ ստանալ, անծանօթ հօրիզոններ ընդգրկել, նոր մարդկանց հետ չփվել...

Կար ժամանակ, երբ ճանապարհորդը այնպիսի դժուար, գրեթէ անյաղթելի խոչընդոտների էր հանդիպում, որ ճանապարհորդութիւնը նըշանաւոր երեւոյթ էր կազմում այն անհատի կեանքում, որը կարողանում էր յաղթել այդ խոչընդոտներին։ Արարատեան երկրից Երուսաղէմ գնալու համար, կամ Ադրիանոպլից, Զուղայից Վենետիկ գնալու համար ամբողջ ամիսներ, երբեմն տարիներ պէտք էին։ Հասկանալի է, որ այն ժամանակ ճանապարհորդները առանձին յարգանք էին վայելում։ Բայց այսօր, XX դարի չէմքին՝ հաղորդակցութեան միջոցները այնքան կատարելագործված են, որ կարելի է պտտել աշխարհիս շուրջը 33 օրվայ ընթացքում։ Երեք ամսում կարելի է այցելել Եւրոպան, Ասիան, Աֆրիկան, Ամերիկան, Աւստրալիան, մի բան, որ հին աշխարհի մարդկանց համար անհերեւակայելի էր։ Այսօր, կարելի է ասել, տարածութեան գաղափարը անհետանալու վրա է։ Ասածս, ի հարկէ, գլխաւորապէս Եւրոպայի մասին է։ Մենք, կովկասցիներս, դժուար թէ կարողանանք լաւ ըմբռնել «չը կայ տարածութիւն» գաղափարը, որովհետեւ մեզ մօտ նոյնպէս հաղորդակցութեան միջոցները գրեթէ նահապետական վիճակի մէջ են, թէեւ, համեմատելով Պարսկաստանի, Ասիական Թուրքիայի հետ, մենք բաւական մեծ առաջադիմութիւն ենք գործել։ Տարածութեան եւ խնայողութեան համեմատութիւնը չօշափելի կացուցանելու համար, ես կը բերեմ հետեւեալ օրինակը։ Թէհրանից մինչեւ Կասպից ծովը ընդամենը 340 վերստ է. այս տարի գարնան այդ տարածութիւնը ես անցայ կառքով, նոր շինած խճուղիով, 4 օրում եւ ծախսեցի 100 բուբլի։ Դեռ եթէ խճուղին չը լինէր, հարկաւոր էր կարաւանով գործ դնել 7 օր։ Սակայն Թիֆլիսից ես եկայ Վարշավա,—3670 վերստ տարածութիւն—5 օրում եւ ծախսեցի 40 բուբլի միայն։ Տարբերութիւնը ահագին է...

Ճանապարհին ես մի ամբողջ օր կանգ առայ Խարկովում։ Խարկովը զանազանվում է Ռուսաստանի սովորական նահանգական քաղաքներից նրանով միայն, որ ունի համալսարան եւ տեխնոլոգիական ինստիտուտ, որոնց մէջ, ի միջի այլոց, ուսանում են մօտ 30 հայ ուսանողներ։ Մոսկվայից եւ Պետերբուրգից յետոյ Խարկովն երրորդ համալսարանական քաղաքն է, որ գրաւում է ամենից շատ կովկասցի ուսանողներ իր կլիմայի եւ էժանութեան պատճառով։ Օրվայ նորութիւնը՝ ժողովրդական տան (народный домъ) բացումն էր, որ տեղի պէտք է ունենար յունիսի 4-ին, կիրակի։ Ժողովրդական տունը մի համակրելի հաստատութիւն է, որի գաղափարը վերջերս սկսել է տարածվել Ռուսաստանում եւ որի նպատակն է նիւթական, բարոյական եւ մտաւոր օգնութիւն հասցնել հասարակ ժողովրդին։ Խարկովինը մի մեծ, ընդարձակ եւ պարզ շինութիւն է, որի մէջ զետեղված են լսարան՝ ժողովրդական դասախօսութիւնների համար, թատրոն, ճաշարան, հիւանդանոց, աշխատութեան տուն։ Զառամեալ, անճար մարդիկ այդտեղ գտնելու են առողջ, պարզ սնունդ եւ մի անկիւն. գործ չունեցողները—աշխատութիւն եւ զբաղմունք, հիւանդները՝ բժշկութիւն, արհեստաւորները, փոխանակ իրանց դրամը եւ ժամանակը, միտքն ու հոգին վատնելու գինետներում, անառականոցներում, լսելու են այդտեղ դասախօսութիւններ, տեսնելու են ներկայացումներ։ Ժողովրդական տունը, ինչպէս ասեցին մեզ, հիմնվել է մասնաւոր բարեգործների նուէրներով եւ քաղաքային վարչութեան օժանդակութեամբ։ Շատ ցանկալի է, որ Կովկասն էլ ունենայ այդպիսի հանրօգուտ եւ մարդասէր մի հիմնարկութիւն. Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը կարող էր նախաձեռնող հանդիսանալ. բարերարներ՝ այդպիսի գեղեցիկ գործի իրագործման աջակցելու՝ միշտ կը գտնվեն։

Խարկովից յետոյ կանգ առայ Կիեւում, որ շատ հաճելի տպաւորութիւն է գործում իր գեղանկար դիրքով։ Առատ բուսականութիւն, առատ ջուր, գեղեցիկ, ճաշակաւոր տներ, մաքուր եւ լայն փողոցներ, էլեքտրական տրամվայ եւ լուսաւորութիւն—ահա ինչ որ խկոյն աչքի է ընկնում Կիեւում, որ Ռուսաստանի նշանաւոր եւ ամենահին պատմական քաղաքներից մէկն է։ Եւ, ինչպէս ասում են, Կիեւը ասիական կեղտոտ քաղաքից վերածվել է եւրոպական գեղեցիկ, մաքուր քաղաքի՝ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, քաղաքային վարչութեան ջանքերով։ Մեզ զարմացրեց Կիեւում եւ զանազան դպրոցների, գիմնազիաների, ռէալական եւ այլ ուսումնարանների առատութիւնը. բացի դրանից, ինչպէս յայտնի է, Կիեւում կայ եւ համալսարան, ս. Վլադիմիրի համալսարանը, իսկ մի տարի առաջ բացվեց եւ Նիկոլայ II-ի պոլիտեխնիկական ինստիտուտը։ Սակայն Կիեւը աւելի յայտնի է Ռուսաստանում իբրեւ եկեղեցական նշանաւոր կենտրոն. այդտեղ, առաջին անգամ, մեծ իշխան Վլադիմիրը, 988 թ-ին, ընդունեց քրիստոնէութիւնը. այդտեղ է ռուսաց «էջմիածինը»՝ Կիեւ-Պեչօրեան վանքը կամ Լաւրան (Кіево-Печорская Лавра)։ Մենք գնացինք այցելելու այդ վանքը, որ շինված է քաղաքի ծայրին, մի բլրի վրա։ Նա հիմնվել է 1073 թ-ին, Սաւվրսի եւ Ֆէօդոսի կրօնաւորների ձեռքով. վերջինիս գերեզմանը գտնվում է բուն տաճարի մէջ, իսկ Սաւվրսին թաղված է տաճարի քարանձաւում,

են համալսարանականներ, բայց այնպիսի հաժալսարանականներ, որոնք, ծանրաբեռնված լայն գիտութեան լուրջ պաշարով եւ ոգեւորված ժամանակի ամենավսեմ իդեալներով, գային ճշմարիտ, հումանիտար քաղաքակրթութեան աւետարանը տարածելու մեր ասիական խաւար ծմակներում։

Տ. Ճ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, օգոստոսի 12-ին

Նորերս հողին յանձնեցին ուսանող Ալէքսանդր Փարսադանեանին, որը Բօրժօմում գահավիժվել էր սարից, զոհ գնալով իր սիրուն դէպի բնութեան գեղեցկութիւնը եւ փոանգաւոր վերելքները։ Հանգուցեալը 22 տարեկան էր։ 1898 թ-ին նա աւարտել էր Թիֆլիսի ռէալական դպրոցը եւ նոյն թ-ին մտել Մոսկվայի տեխնիկական դպրոցը, որտեղ այս մայիսին փոխվել էր երկրորդ լսարանը։ Այս ամառվայ սկզբում հայրենիք վերադառնալիս՝ մի խումբ ընկերների հետ՝ նա ոտով անցել էր ամբողջ Վլադիկավկազեան ճանապարհը, մի բան, որ հաղուագիւտ է մեր ուսանողութեան կեանքում։ Իբր մարդ՝ նրան բնորոշեց ուսանող Խարազեան մի դամբանականով, ընդգծելով նրա երբեմն նոյն իսկ ինքնամոռացութեան հասցրած ընկերասիրութիւնը, որով նա թէ աշակերտական նստարանի վրա եւ թէ կարճատեւ ուսանողական կեանքում գրաւել էր իր ընկերների սէրը, որոնց ասելով, նա մեծ ընդունակութիւններ էր ցոյց տալիս քիմիայի մէջ եւ ապագայ էր խոստանում։

Գաղափարի համար չէր, որ զոհվեց Փարսադանեան, բայց եւ հասարակ ժահ չէր նրա մահը։ Ազնիւ, վսեմ հետաքրքրութեան զոհ գնաց նա։ Մի անվեհեր սիրտ պակասեց մեր երիտասարդութիւնից, որը չէ փայլում իր անվեհերութեամբ։ Մի անհատականութիւն կորաւ մեր ուսանողութիւնից, որ այնքան աղքատ է բնաւորութիւնների կողմից եւ այնքան հարուստ դիմազուրկ, անգոյն, իրանց ողորմելի գոյութեան վրա դողացող եւ անգիր արած դասախօսութիւններ կրկնող չնչաւոր ֆօնոգրաֆներով։

Հանգուցեալ Փարսադանեան անտարբեր ուսանարիւն հանդիսական չէր կարող լինել այն բոլորին, ինչ որ իր շուրջը կը կատարվէր։ Նա չէր ասի թէ—ինձ ինչ փոյթ, որ այնտեղ ծեծում, ջարդում են, այստեղ լալիս, մեռ տեղ ծաղրում, ծիծաղում... Նրա համար մի եւ նոյնը չէր կարող լինել՝—լուն են խրախուսում թէ վատը,—ինչպէս որ նրա համար նոյնը չէր թէ բնութեան այս կամ այն վայրում ինչ գեղեցկութիւն է թագնվում, կամ այս ու այն բարձրութիւնից մարդիկ ինչպէս են երեւում... Նա ցանկացաւ մի բոպէ հեռանալ իրան շրջապատողներից, առանձնանալ սարսուռ ազդող բարձրութիւններից մէկի գլուխը, այնտեղից դիտելու—արդեօք մարդիկ նոյն կերպ են վիտում ձորում, թէ հեռանկարում նրանց էութիւնն այլ կերպ է պարզվում։ Բայց... աւաղ, բնութիւնը՝ ինչպէս երեւում է՝ այնքան հեռու չէ ուզում արձակել մարդու մտածողութիւնը. նա չափ ու սահման է որոշում,—արա եւ տես այն, ինչ որ քո ճնչին էութեանդ մատչելի է, քթիդ տակին, հորիզոնի վրա, աւելին քո գիտակցութեանդ բանը չէ... Երկար չէր բարձրացել նա, որ յանկարծ վերեւից գլորվող քարը իր ծանրութեան տակն է առնում նրան։ Բայց հարցասէր Ալէքսանդրը հեշտութեամբ չէ ուզում խոնարհվել այդ վճռի առաջ. նա որքան կարողանում է կուում է քարի հետ, մինչեւ որ քարը սղմում է նրան լեռան կրծքին եւ իր դերը կատարած համարելով, ընկնում է ցած մնչող գետի մէջ, կարծես իր արիւնոտ կողքերը մաքրելու, մարդասպանութեան հետքերը կորցնելու համար... Երեք բոպէ չանցած՝ գլորվող քարից բարձր անցնող երկու ընկերները իջան մինչեւ Ալէքսանդրի կանգ առած տեղը, բայց... ջախջախված, արիւնաթաթախ դիակից աւել ոչինչ չը կար այնտեղ, որտեղ նրանք փնտռում էին իրանց անվեհեր ընկերոջը... Չը կար այլ եւս Ալէքսանդրը, չը կար դեղեցիկ գաղափարով աներկիւղ հրապուրվողը, չը կար հարցասէր, հետաքրքրվող ուղեղի, վճռողական եւ եռանդոտ հոգու տէրը, չը կար յոյսեր տրւող ուսանողը։ Նա մեռել էր... մեռել էր հրապարտ եւ վեհ իր սրտում, ինքնուրոյն իր էութեամբ, թողնելով միայն օգտակար մարդու իսկական նշաններ, ուրիշներին կտակելով այդպիսի նշանների իրագործումը։

Ցակ. Ստեփանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շուշի, օգոստոսի 19-ին

Օգոստոսի 17-ին յանձնում են ինձ պօստի ծանուցագիր (повѣстка) իմ հացէով տասը բուբլու. նոյն օրը ժամը 1 եւ 50 բոպէ մանում եմ պօստատուն փողը ստանալու.—հաշիւները փակել ենք, եղաւ պատասխանը՝ միաժամանակ երեք ծառայողների կողմից։ Հետեւեալ օրը գնում եմ. պատասխան եմ ստանում, դրամարկղում փող չը կայ։ Վերջապէս այսօր էլ ինձ յայտնում են, որ մանեմ ժամը մէկին, որովհետեւ պետական գանձարանից դեռ փող չեն ստացել. ինձ մնում էր միայն բողոքել այդ տգեղ վարմունքի դէմ եւ յետ դարձնել ծանուցագիրը։

Ակամայ հարց է ծագում, ինչու են ծանուցագիր տալիս, երբ փող չը կայ, մանաւանդ, որ իմ դէպքը բացառիկ դէպք չէ։ Լինում են դէպքեր, երբ ամբողջ մի շաբաթ ձեռնունայն գնում գալիս են որ եւ է մի գումար ստանալու. երեւակայեցէք խեղճ անդրադէտ արհեստաւորների, մանաւանդ գիւղացիների անելանելի դրութիւնը, երբ այդպիսով նրանք ստիպված են լինում գործից յետ մնալ եւ գուցէ այնքան ծախսել քաղաքում, որքան չը պիտի ստանան պօստից։

Բառնաբաս Միրզայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«С.-Пет. Вѣд.» լրագրի մէջ տպված է Բեսարաբիայի Օրգէեվ քաղաքից ուղարկած հետեւեալ հեռագիրը. «Մեռաւ Դելիանեանների նշանաւոր տոհմի բնաարաբեան ճիւղի վերջին ներկայացուցիչը, անչահասէր, ազնիւ, հաւատարիմ եղօր Քրիստոֆորեան Դելիանեանց։ Թաղումը 17-ին օգոստոսի Սօրոկի գաւառի, Կօբրնէ գիւղի, Կատարժի կալուածքում»։

—

Աչքի՝ տրաքօմա կոչված հիւանդութիւնը մոցրած է այն հիւանդութիւնների թիւը, որոնք ազատում են մշտական զօրքերում ծառայելու պարտականութիւնից։

—

«Дальній Востокъ» լրագիրը հաղորդում է, թէ ներկայումս Պօրտ-Արտուրում դէպի եւրոպական Ռուսաստան ուղարկվող հեռագրի ամեն մի բառի համար առնվում է 2 ր. 33 կոպ. վճար։ Սովորական ժամանակ ամեն մի բառի վճարը 83 կոպէկ էր։

—

Առաջիկայ սեպտեմբեր ամսի 7-ին Բօստօվ քաղաքում կը բացվի անասնապահական մի ցուցահանդէս, որտեղ հանդէս բերված կը լինեն, ի միջի այլոց, Արաբիայից բերված ձիեր։ Այս տարվայ ցուցահանդէսը երրորդը կը լինի թւով. առաջին ցուցահանդէսն այցելեցին 5,000, անցեալ տարվանը՝ 12,000 հոգի եւ ստացվեց 3½ հազար բուբլի եկամուտ։ Ցուցահանդէս կազմողները յոյս ունեն, որ նա այս տարի պիտք է աւելի եւս աջող լինի, քան նախորդ տարիները։

—

Պէտք է ասասել, որ մօտ ժամանակներում նաւթային արտադրութիւնների գները կիջնեն, որովհետեւ Բագուում, վերջին ամիսների ընթացքում, զգալի կերպով աւելացել է նաւթի պաշարը։ Այսպէս, անցեալ 1890 թ-ի յուլիսին ստացվել է 43,000,000 պուդ նաւթ, իսկ այս տարի նոյն ամսում ստացվել է 62,000,000 պուդ։

—

Զինաստանի սահմանում տեղի ունեցող պատերազմի պատճառով հրէական ընտանիքներում, որոնցից զինուոր են գնում պատերազմի դաշտը, ներկայումս կատարվում են պ ա յ մ ա ն ա ւ ո ր ա պ ա հ ա ր զ ա ն ն ե ր։ Հրէական սովորութեամբ ապահարզան կարող է տեղի ունենալ, երբ համաձայնութիւն կայ տղամարդու կողմից։ Այդ պատճառով պատերազմ գնացող զինուորներից ապահարզանի համար պայմանաւոր համաձայնութիւն են վերցնում, որոնցից պէտք է օգտվեն նրանց կանայք, եթէ պատերազմից յետոյ երկար ժամանակ չը ստացվեն նրանց ամուսիններից տեղեկութիւններ։

—

Անտառապահութեան ինստիտուտը, որը գտնվում է Պետերբուրգի մօտ, շուտով կընդարձակվի եւ կը շինվի նոր յատակագծով։ Ինստիտուտի հին շինութիւնը կը ծառայեցնվի թանգարանների, լաբօրատորիաների եւ ժողովածուների համար, իսկ ուսանողների եւ պրոֆէսօրների համար կը կառուցվեն նոր շինութիւններ։

—

Ռուսաստանի երկաթուղիներից մի քանիսի արագ գնացքներում այսուհետեւ լինելու են ագախիններ, ինչպէս այդ ընդունված է արտասահմանեան երկաթուղիներում։

—

Ղուբայի գաւառի ԿՈՒՍԱՐԻ աւանից մեզ գրում են. «Կօլօնիայում եղած աշակերտների դրութիւնը, վեց օր տեղացող անձրեւներից յետոյ, նախանձելի չէ։ Փոքրիկ աշակերտները, որ թիթեռի չափ համբերութիւն չունեն, այժմ եղանակի պատճառով ստիպված են ամբողջ օրերով կօրպուսում նստել ու դուրսը նայել։ Եղանակները նաեւ խանգարում են զբօսանքին, որ ծրագրված է մի քանի օրով դէպի մօտակայ լեռները։ Դիրեկտօրը մտադիր է ամսիս 26-ին աշակերտներին տեղափոխել Բագու»։

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Անցեալ 1899 թ-ի աշնան Վաղարշապատից լոյս է ընկնում Երեւան Արտեմ անունով մօտ 70 տարեկան սպիտակամօրուք մի մարդ ու իրան բժիշկ հռչակում, ասելով, թէ գտել է մի նոր դեղ կանանց ամլութեան դէմ։ Օ՛, ինչ երջանիկ օր էր այդ օրը. մի ժամում բոլոր թաղերի տիկինները իմացան նոր մարգարէի գալուստը։ Միւս օրը մեր «երկինք գետինք քննող Լողմանը» արդէն ֆայէտօնով այցելութիւն էր գնում զանազան տներ, մի տեղ թէյ էր վայելում, միւս տեղ սուրճ, երրորդում ճաշ, չորրորդում ընթրիք, գնահատելով իր բժշկական օգնութիւնը 50 բուբլի, 10 բուբլի այս գլխիցը, իսկ մնացեալ 40-ը, երբ բուժվող կինը ազատվի երկունքից։ Պայմանը անմիջապէս ընդունվում էր եւ 10 բուբլիանոց ոսկիները թափվում էին բժշկի գրպանը։ Միւս օրը խորամանկ ծերունին ուղարկում է ամեն մէկին մի-մի չիշ դեղ, սատանան գիտէ՝ թէ ինչից պատրաստած, տալով հետեւեալ պատուէրը. «Ընդունեցէք առաւօտ եւ երեկոյ մի-մի հացի գդալ, մինչեւ ես գնամ Վաղարշապատ միւս դեղերը պատրաստեմ ու վերադառնամ»։ Այդ վերադարձին մինչեւ այժմ էլ սպասում են երեւանցիները։ «Երկինք գետինք քննող» բժիշկը անհետացել է եւ ով գիտէ որտեղ փառաւորապէս մաքրազարդում է դեղին ոսկիները, իսկ նորամանուկները թարսվել են եւ լոյս աշխարհ չեն գալիս»։

—

ԴԵՐԲԵՆՏԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 21-ին այստեղացի ուսանողները ներկայացում տուին՝ յօգուտ չքաւոր ուսանողների։ Խաղացին «Բարեգործութեան դիմակի տակ» պիէսան։ Դերակատարներն ընդհանրապէս լաւ էին իրանց դերերում։ Զուտ արդիւնք մնաց... միայն 10 բուբլի։ Կեցցէ մեր հասարակութիւնը»։

—

ՀԱՂԲԱՏԻՑ մեզ գրում են. «Գողերն աւերեցին մեզ։ Օր չէ լինում, որ մեզանից ապրանք չը գողանան,—եզ, կով, ձի, գոմէշ, ոչխար։ Գողերը մեր դրացի գիւղացիներն են։—Մեր գիւղացիները տարին մի անգամ կապվում են կալուածատէրերի հետ, վարձով վերցնելով վարելու եւ արածացնելու տեղերը, բայց եթէ պատահմամբ հարեւան գիւղացու անասունները մեր հանդի կողմն են գալիս, «կնեազի» անտառապահները իսկոյն հաւաքում բերում են, տուն են անում եւ մինչեւ մի ապրանքի մի ոտին մի բուբլի չեն առնում, չեն տալիս, թէեւ իրաւունք չունեն տուգանք առնելու, որովհետեւ հանդերը մեր գիւղի բնակիչների իրաւունքի տակ են։

—

ԽՆԶՈՐԵՍԿ գիւղից (Զանգեզուրի գաւառ) մեզ գրում են. «Այս տարի Խնձորեսկ գիւղը ներկայացնում էր մի ցորենի շտեմարան, որտեղից մեծ քանակութեամբ ցորեն էին դուրս տանում շրջակայ գիւղացիները. ցորենի այդ առատութիւնը հետեւանք էր այն նոր երեւոյթի, որ այս տարի խնձորեսկեցիները առաջվայ նման չէին ձգտում օտարութեան, այլ օրէցօր չատանում են մաճաճէրների թիւը։ Մեծ գովազդկանք, յուսահատ մարդկային օգնութիւնից, դիմում է մեռեալ սրբերի օգնութեան, եւ դրա համար ծախսում է իր վերջին կօպէկը, մեռնում է նոյն իսկ ճանապարհին հիւանդութիւնից, յոգնածութիւնից... Այն 1500 վարդապետները, որոնցից կազմված է Լավրայի միաբանութիւնը, գրեթէ ամենքն էլ կարմրաթուշ, առողջ, պարարտ, կատարեալ հակապատկեր էին ներկայացնում հիւանդոտ, յոգնած, հիւծված ախտաւոր մուժիկների հետ։

Վանքը, ինչպէս հաղորդեց մեզ միաբաններից մէկը, եկամուտի առանձին աղբիւրներ չունի, այլ ապրում է հաւատացեալների նուէրներով։ Միաբանների խուցերը բաւական կօկիկ, գեղեցիկ եւ մաքուր չինութիւններ են։ Վանահայրը Կիեւի միտրօպոլիտն է, բայց վանքը կառավարվում է տեղապահի ձեռքով, որովհետեւ միտրօպոլիտը մի եւ նոյն ժամանակ ռուսաց սրբազան սինոդի ատենակալն է, մի հանգամանք, որ ցոյց է տալիս, թէ ռուսաց եկեղեցու նուիրատուութեան մէջ որքան առաջնակարգ դեր է խաղում Կիեւի միտրօպոլիտը եւ Պեչօրեան Լավրայի վանահայրը։

Նշանաւոր է Լավրայի զանգակատունը. 176 աստիճանով մի սանդուղք տանում է ձեզ մինչեւ գագաթը, որտեղից մի հիանալի պանօրամա է բացվում ամբողջ քաղաքի վրա։ Բազմաթիւ զանգակների մէջ մի մեծ զանգակ կայ, որ կշռում է 1636 պուդ, նոր շինված եւ ձուլված Մոսկվայում. այդ զանգակը կախված է ի յիշատակ Նիկոլայ II Կայսրի այցելութեան, որ տեղի ունեցաւ 1896-ին։ Լավրայի մէջ թաղված կայ եւ վրաց կաթողիկոսներից մէկը, Մակար անունով, որ Աստրախանից եկած լինելով ուխտ, ինչպէս ասված է տապանագրի վրա, այդտեղ էլ մեռել է։

Փառահեղ Դնեպրի ափին, գահավէժի վրա բարձրանում է մեծ իշխան ս. Վլադիմիրի արձանը ահագին խաչը ձեռքին։ Արձանը կանգնեցրել են ռուսաց քրիստոնէութիւն ընդունելու իննհարիւրամեակին։ Խաչը պատած է ամեն կողմից էլէքտրական ճրագներով. գիշերը, ինչպէս ասում են, տպաւորութիւնը հրաշալի է։

Նշանաւոր է եւ Կիեւի ս. Սօֆիայի տաճարը, որի առաջ բացվում է մի մեծ հրապարակ. այդ հրապարակի վրա գտնվում է մի մեծ արձան, Բօգդան Խմելնիցկու արձանը ձիու վրա եւ զէնքով եւ այս ռուսերէն արձանագրութեամբ՝ «Բօգդան Խմելնիցկուն՝ մի եւ անբաժան Ռուսաստանը»։ Ցայտնի է նաեւ ս. Վլադիմիրի տաճարը պատերի վրա քաշած հիանալի նկարներով, որոնց վրա աշխատել են ռուս նշանաւոր նկարիչները։

Կիեւը, իր առողջ օդի, բուսականութեան եւ այլ պայմանների պատճառով, շատ յարմար է կովկասցիների համար եւ վերջին տարիները կովկասցի ուսանողների թիւը հետզհետէ աւելանում է այստեղ, այնպէս որ շուտով Կիեւը կը դառնայ նշանաւոր ուսանողական կենտրոն հայերի համար։

(Կը շարունակվի)

ուր գտնվում են եւ մօտ 150 սրբերի չիրիմները, որոնց մէջ ի ցոյց են դրված նրանց կըմախքները։ Այդ քարանձաւը եւ Լավրան ամբողջ օրթոդոքս Ռուսաստանի համար մեծ ուխտատեղի են կազմում, մանաւանդ որ Լավրայի մէջ, դագաղում, դրված է ս. Վլադիմիրի նշխարքը՝ գլուխը (մարմինը թաղված է տաճարին կից մի այլ եկեղեցում)։ Ուխտի գլխաւոր օրը ս. Աստուածածնի վերափոխման օրն է, օգոստոսի 15-ին. հէնց միայն այդ օրը Ռուսաստանի զանազան անկիւններից, Արխանգելսկից բռնած մինչեւ Օդեսա, ուխտաւորներ են գալիս, 30—40,000 հոգի, իսկ ամբողջ տարին ուխտաւորների թիւը 100,000-ից անցնում է։ Գալիս են ռուս գեղջուկները եւ գեղջկուհիներ, հազարաւոր վերստեր հեռու, հեռիտան եւ ոտաբոբիկ, գալիս են դարման եւ փրկութիւն հայցելու իրանց վշտերին, կարիքներին ս. Վլադիմիրի գերեզմանից եւ քարանձաւում շարված սրբերի կմախքներից։ Հէնց մեր այցելութեան օրը, կիրակի, յունիսի 4-ին, մենք հանդիպեցինք մի խումբ ուխտաւորների, մեծ մասը բաղկացած ծերունիներից եւ պառաւ կանանցից. սաստիկ անձրեւ էր գալիս. ուխտաւորները ոտաբոբիկ, պարկը ուսին կապած, հիւծված, մաշված, յոգնած, շարժվում էին ցեխի մէջ, անձրեւի հեղեղի տակ եւ ուրախացած, որ արդէն տեղ են հասել, յուսադրում էին միմեանց, խրախուսելով հիւանդներին, որոնք այլ եւս կարողութիւն չունէին առաջ գնալու. «հոգիս, տես հասել ենք, քիչ է մնացել, շուտով սուրբ Ամբրօսին կառողջացնի քեզ»։

—Դեդուշկա, հարցրի ես մի ծերունուց, որ ոգեւորված, ցուպը շարժելով, շրջի-շրջի ցեխի մէջ առաջանում էր. հեռուից ես գալիս։

—Ա՛խ, հարազատս, պատասխանեց, շատ հեռուից, Տամբովի նահանգից ենք գալիս, ուխտի ենք գալիս։

—Քանի ժամանակ է մնից դուրս էք եկել։

—Քառասուն օր է ճանապարհորդում ենք։

—Ինչու երկաթուղիով չեկաք, որ շուտ դաք։

—Ո՛հ, հարազատս, մի՞թէ այդ կարելի է. այն ժամանակ մի՞թէ մեր ուխտը կընդունվի։

—Մատուշկա, դիմեցի ես մի պառաւ կնոջ, որ բռնած մի հիւանդ, յոգնած, նոյնպէս ոտաբոբիկ երիտասարդի ձեռքից, գնում էր, մի մեծ կապոց ես շալակած, որտեղից էք գալիս։

—Նովգորոդից, պատասխանեց պառաւը, գընում ենք Լավրան, որ սուրբ Թէօդոսին բժշկութիւն տայ որդուս. երեք տարի է հիւանդ է. իսկ դու որտեղից ես, հետաքրքրվեց պառաւը։

—Օ, ես էլ շատ հեռուից եմ, Կովկասից։

Ուրիշներից արած հարց ու փորձից երեւաց, որ շատերը գալիս են անբերրիութիւնից եւ սովից տառապվող նահանգներից՝ հայցելու, որ քարանձաւի սուրբերը իրանց տառապանքը թեթեւացնեն... Իմ առաջ ես տեսնում էի մի ահագին բազմութիւն, միամիտ, պարզ, լի հաւատով, որ տանելով ամեն տեսակ նեղութիւն, զրկանք, յուսահատ մարդկային օգնութիւնից, դիմում է մեռեալ սրբերի օգնութեան, եւ դրա համար ծախսում է իր վերջին կօպէկը, մեռնում է նոյն իսկ ճանապարհին հիւանդութիւնից, յոգնածութիւնից... Այն 1500 վարդապետները, որոնցից կազմված է Լավրայի միաբանութիւնը, գրեթէ ամենքն էլ կարմրաթուշ, առողջ, պարարտ, կատարեալ հակապատկեր էին ներկայացնում հիւանդոտ, յոգնած, հիւծված ախտաւոր մուժիկների հետ։

Վանքը, ինչպէս հաղորդեց մեզ միաբաններից մէկը, եկամուտի առանձին աղբիւրներ չունի, այլ ապրում է հաւատացեալների նուէրներով։ Միաբանների խուցերը բաւական կօկիկ, գեղեցիկ եւ մաքուր չինութիւններ են։ Վանահայրը Կիեւի միտրօպոլիտն է, բայց վանքը կառավարվում է տեղապահի ձեռքով, որովհետեւ միտրօպոլիտը մի եւ նոյն ժամանակ ռուսաց սրբազան սինոդի ատենակալն է, մի հանգամանք, որ ցոյց է տալիս, թէ ռուսաց եկեղեցու նուիրատուութեան մէջ որքան առաջնակարգ դեր է խաղում Կիեւի միտրօպոլիտը եւ Պեչօրեան Լավրայի վանահայրը։

Նշանաւոր է Լավրայի զանգակատունը. 176 աստիճանով մի սանդուղք տանում է ձեզ մինչեւ գագաթը, որտեղից մի հիանալի պանօրամա է բացվում ամբողջ քաղաքի վրա։ Բազմաթիւ զանգակների մէջ մի մեծ զանգակ կայ, որ կշռում է 1636 պուդ, նոր շինված եւ ձուլված Մոսկվայում. այդ զանգակը կախված է ի յիշատակ Նիկոլայ II Կայսրի այցելութեան,

ամանքի արժանի են մեր երկրագործ գիւղացիները, որոնք մեծ կարիքից եւ նեղութիւնից ազատեցին չրջակայ գիւղացիներին։ Բայց նրանք անհեռատես գտնվեցին, որ իրանց ունեցած ցորենը չուտով ծախեցին, յուսալով, թէ արտերը արդէն հասունացած են։ Եւ հէնց այդ անհեռատեսութիւնը այն հետեւանքն ունեցաւ, որ երկու շաբաթ մնացած, մինչեւ ցորեն կասելը, նրանք հացի պակասութիւն էին քաշում. տասը բեռնով ծախողը պարկով էր ցորեն տանում ջրաղաց։ Գիւղացիները անհամբեր սպասում էին հնձին, բայց երբ արտերը արդէն հասել էին, եղանակները փոխվեցին։ Անձրեւների պատճառով արտերը պառկեցին։ Վերջին օրերս եղանակը փոխվեց, գիւղացիք ամեն ջանք եւ կորով գործ դրին եւ հնձեցին իրանց արտերը. խեղճերը ամբողջ օրերով կալերում չարչարվում են եւ հարիւր խրձից հազիւ ստանում են տասն եւ երկու պուդ կամ ամենաշատը 16 պուդ ցորեն։ Ցորենի մեծ մասն էլ անպէտք է։ Խոտը շատ է չնորհիւ վերոյիշեալ վատ եղանակների»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

—

Վերջին ժամանակ Չինաստանից ստացվում են տեղեկութիւններ, որ եապօնացիները, հետեւելով ռուսների եւ անգլիացիների օրինակին՝ գրաւեցին ժամանակաւորապէս չինական երկիրներից մի կտոր—Ամոյ ծովափնեայ քաղաքը, որի վրա վաղուց աչք ունէին նրանք։ Եապօնացիները ափ հանեցին այնտեղ 12,000 զօրք եւ առանց ուշադրութիւն դարձնելու չինական իշխանութիւնների եւ անգլիական հիւպատոսի բողոքներին, տիրեցին քաղաքը։ Ամոյ նաւահանգիստը շատ կարեւոր նշանակութիւն ունի Եապօնիայի համար։ Ոչ միայն այդ նաւահանգիստը, այլ նոյն իսկ Ֆոկիէնի ամբողջ նահանգը, որտեղ գտնվում է Ամոյ, եապօնացիները համարում են այնպիսի չրջան, ուր բացառապէս տիրապետող պիտի լինեն եապօնական շահերը։ Ամոյ գտնվում է Ֆօրմօզա կղզու հանդէպ եւ կէս օրվայ ճանապարհ նրանից հեռու։ Բացի սրանից ապագայում Ամոյ քաղաքը կարող է ռազմագիտական մեծ նշանակութիւն ունենալ, որովհետեւ նրա յետեւում ձգվում են լեռների շղթաներ, որոնք հնարաւորութիւն են տալիս հեշտութեամբ պաշտպանելու քաղաքը այն ժամանակ, երբ հարկ կը լինի զօրքեր ցամաք հանել կամ զինուորական նաւեր մտցնել նրա նաւահանգիստը։ Արդեօք երկար ժամանակ կը մնան եապօնացիները Ամոյում—յայտնի չէ։ Եապօնիան, իր դեսպանների միջոցով տեղեկութիւն տալով պետութիւններին Ամոյի գրաւման մասին, բացատրեց, որ գրաւումը տեղի է ունեցել միայն տեղական հիւպատոսներին եւ օտարերկրացիներին պաշտպանելու նպատակով...

«Chicago Record» լրագրում տպված են բարոն Գայեաշիի, Լօնդոնի եապօնական դեսպանի կարծիքները իրերի ներկայ դրութեան վերաբերմամբ Չինաստանում։ Գայեաշի կարծում է, որ օտար պետութիւններին շատ դժուար կը լինի դրական վարձատրութիւն ստանալ Չինաստանից՝ իրանց կրած վնասների փոխարէն եւ մի եւ նոյն ժամանակ չը ստորացնել չինացիների աչքում ժանչուրական թագաւորող տունը։ Այդ տունը կարողանում է կառավարել հարիւրաւոր միլիոններից բաղկացած մի ժողովուրդ երկիւղի զօրութեամբ միայն։ Ժողովուրդը հաւատարիմ էր մնում նրան այն պատճառով, որ համարում էր ժանչուրներին ամենակարող։ Պետութիւնները պէտք է վճռեն մի շատ դժուար խնդիր—ստանալ Չինաստանից ահագին քանակութեամբ վարձատրութիւն եւ թագցնել մի եւ նոյն ժամանակ չինացիներից ժանչուրական դինաստիայի անընդունակութիւնը եւ անզօրութիւնը։ Չինական ներկայ կայսերական տան կենսական ոյժերը բոլորովին սպառված են, այնու ամենայնիւ մեծ սխալ կը լինէր պետութիւնների կողմից դահընկէց անել նրան ներկայ հանգամանքներում, որովհետեւ այդ լայնատարած երկիրը կը մատնվէր այնպիսի անիշխանութեան, որի ելքը դժուար է գուշակել։

Մարսէյլ Մօնիէ, որ բազմաթիւ յօդուածներ նուիրեց «Temps» լրագրում չինական հարցին, իր վերջին յօդուածներից մէկում հետեւեալն է գրում. «Եւրոպական պետութիւնները—ասում է նա—չեն կարող անվերջ զօրքեր պահել հեռաւոր արեւելքում։ Նրանք ստիպված պէտք է լինեն տանել իրանց զօրքերը այնտեղից։ Բայց ինչ կը լինի յետոյ։ Չինաստանը, ստորացած, պատժված, լուութեան դատապարտված, կը սկսէ աւելի եւս ատել եւրոպացիներին քան առաջ. եւ ով կարող է երաշխաւոր լինել, որ եւրոպական զօրքերի հեռանալուց յետոյ՝ Չինաստանում չեն ծագի նոյնպիսի անկարգութիւններ, որոնք տեղի ունեցան մոտիկ անցեալում։ Չինացիների այդ խուլ ատելութեան դէմ պէտք է հաստատուն միջոցներ ձեռք առնել, միջոցներ, որոնք միշտ զսպած պահէին չինացիներին։ Բայց ինչ միջոցների դիմել։ Թողնել Չինաստանում միջազգային զօրքերի մի զօրաբաժին։ Բայց մրցումը եւ թիւրիմացութիւնները պետութիւնների մէջ խիստ վտանգաւոր հանգամանքներ են եւ այդ միջոցին դիմելը անզգուշութիւն կը լինի։ Պահապան զօրաբաժինը, Մօնիէյի կարծիքով, պէտք է կազմված լինի «միատեսակ ոյժից», լինի բոլորովին անկախ, ենթարկվի մի հրամանատարի եւ ազատ լինի ազգային մրցումներից։ Պահապան զօրաբաժինը պէտք է կազմված լինի այնպիսի ազգի զօրքերից, որը բոլորովին առեւտրական, եւ ընդհանրապէս գաղթականական շահեր չունենայ Չինաստանում։ Այդպիսի պետութիւն է Շվէյցարիան։ «Ինչու՞ չը կազմակերպել մի կօրպուս շվէյցարացիներից, շարունակում է յօդուածագիրը —այդ կօրպուսը ներկայացուցիչ կը լինէր ոչ միայն զինուորված Եւրոպայի եւ մշտական սպառնալիք չինացիներին, այլ գուցէ նաեւ մի գործօն քաղաքակրթութեան տարածման Չինաստանում»։ Մօնիէ երկար բացատրութիւնն է տալիս իր նախագծի իրագործման վերաբերմամբ, թուում է թէ ով պէտք է նշանակէ օֆիցէրներին, որտեղ պէտք է բնակութիւն հաստատեն կօրպուսի զանազան մասերը, իսկ կօրպուսի պահպանութեան ծախսերը... նա ամբողջապէս դնում է Չինաստանի վրա։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ
(Աշխատութեան տօնը)

—

Պարիզ, օգոստոսի 21-ին

Օգոստոսի 18-ին, ճիշդ այն օրը, երբ հեռագիրը աւետեց միացեալ զօրքերի յաղթութիւնը եւ հանդիսաւոր մուտքը չինական մայրաքաղաքը,—այստեղ՝ Սէն գետի ափերին, խմբված հարիւր հազարաւոր անձինք ականատես էին մի այլ յաղթութեան, յաղթութիւն, որ ձեռք էր բերված ոչ ռումբերի կործանիչ զօրութեամբ, ոչ սուլիների ծայրերով, ոչ արեան գնով, այլ տոկուն աշխատանքով, խաղաղ գործունէութեամբ։

Այդ օրը համաշխարհային ցուցահանդէսի մրցանակաբաշխութեան տօնն էր։ Այդ օրը հանրապետական Ֆրանսիան պատկում էր մարդկային հանճարը։ Դա աշխատանքի տօն էր, աշխատանքի եւ գիտութեան ապօթէօզը։

Մրցանակաբաշխութիւնը տեղի ունեցաւ ցուցահանդէսի Salle des fêtes կոչված դահլիճում։ Հրաւիրված էին մօտ 20 հազար անձինք, որոնց մեծ մասը կազմում էր մի բազմալեզու հասարակութիւն. գրեթէ բոլոր ազգերն էլ այդտեղ ունէին իրանց ներկայացուցիչները։

Ժամի 3-ին մուտք է գործում հանրապետութեան նախագահ Լուբէ՝ շրջապատված մինիստրներով։ Հանդիսականներն ընդունում են նրան օվացիաներով։ Թնդում են Marseillaise-ի կրակոտ, ուժեղ հնչիւնները, որ ամբողջ հասարակութիւնը լսում է յոտնկայս եւ գլխաբաց։ Ազգային օրհներգին հետեւում է մի այլ քայլերգ, որի ժամանակ ցուցահանդէսին մասնակցողներից կազմած խմբեր իրանց ազգային, տարբեր-տարբեր հագուստներով եւ դրօշակներով հանդիսաւոր կերպով գալով նախագահի առաջ, դրօշակները խոնարհեցնում են եւ միահամուռ բուռն ծափահարութիւններով եւ ոգեւորված ցոյցերով ուղեկցված անցնում են իրանց յատկացրած տեղերը։ Այդպէս խումբ խումբ անցան բոլոր ազգերի, գրեթէ ամբողջ մարդկութեան ներկայացուցիչները։

Այդ հանդիսաւոր ելքից յետոյ՝ հինգ հարիւր հոգուց բաղկացած մի խումբ երգում է յատկապէս այդ օրվայ տօնի համար յօրինած Himne à la Patrie։ Տեղից բարձրանում է Լուբէ եւ դահլիճում տիրող խորին լռութեան մէջ՝ խաղաղ կերպով արտասանում է մի ճառ, որն ընդհատվում է բուռն ծափահարութիւններով։

Առաջ ենք բերում մի փոքրիկ կտոր, որ իր մէջ պարունակում է այդ ճառի, այսպէս ասած, հիւթն ու համը։

«1900 թուականի ցուցահանդէսը պիտի համերաշխութեանը տայ մի ամենափայլուն արտայայտութիւն. նա կը տայ նրան մի նոր զօրութիւն՝ զօրութիւն տարածելու եւ համոզելու։ Համերաշխութիւնը, որին մենք արդէն մեծ բաներ ենք պարտ, ապագայում ոյժի յաղթանակը կը դարձնէ աւելի դիւրաբեկ, իսկ իրաւունքի իշխանութիւնը աւելի ճանաչված»։

Երբ Լուբէին ուղղած օվացիաները հանդարտում են, տեղից բարձրանում է մինիստր Միլերան եւ ծանր, ուժեղ ձայնով կարդում է մի շատ գեղեցիկ ճառ։ Արժէր այդ նշանաւոր բանախօսութիւնը առաջ բերել ամբողջովին, բայց տեղի սղութեան պատճառով բաւականանանք երկու քաղուածքով։

«Մի նոր դարագլխի լուսադէմին, երբ իր աշխատանքը վերջացրած անյայտանում է մի դար, որի անժխտելի մեծութիւնը միայն մենք կարող ենք վկայել,—մարդկութեան ոյժերի մի հանդէս է այս, որ մենք կատարեցինք։ Ողջոյն յաղթողին. ցուցահանդէսի բոլոր գալլերէաները ոտնում են գիտութեան յաղթութիւնը։ Նա դիզել, կուտակել է հրաշք-սքանչելիքներ եւ նրա նորագոյն գիւտերը խոստանում են մեզ նոր եւ արագ հրաշքներ»։

Ապա աչքի անցնելով ցուցահանդէսի զանազան մասերում դարսած սքանչելիքները, Միլերան բացականչում է.

«Բայց մարդկութեան ինչին են պէտք ամենահրաշալի գիւտերը, ամենասքանչելի մեքենաները, եթէ մարդու դրութիւնը դրանով չի բարելաւվի, բարւոքվի։ Ո՛չ թէ գործիքի կատարելագործութեամբ պիտի չափել քաղաքակրթութեան աստիճանը, այլ բանւորի բարօրութեամբ։ Մարդը, ասում են, իր բարօրութեան վարպետն է։ Գոնէ անհրաժեշտ է, որ հասարակութիւնը նրան ազատ ժամանակ տայ՝ իր բարօրութեան համար աշխատելու. անհրաժեշտ է, որ հասարակութիւնը նրան չանասնացնէ ոյժերից վեր ծանր գործի ճնշման տակ. անհրաժեշտ է, որ հասարակութիւնը նրա շուրջը ստեղծէ հաներաշխութեան եւ արդարութեան մթնոլորտ, ուր զարգանում են մարդուլաւ բնազդները եւ անհետանում են վատերը»։

Թշուառութիւնների պակասումը եւ եղբայրութեան իրագործումը,—ահա ինչ էր մաղթում Լուբէն երկրագնդիս բոլոր ծայրերից եկած հասարակութեան եւ պետութիւնների ներկայացուցիչներին։ Այդ բարձր իդէալը կարելի է իրագործել, պնդում է Միլերան, միայն այն ժամանակ երբ ոչ մի ճնշում, ոչ մի լուծ չի կացնի, չի ճկի ոչ մի ժողովրդի եւ ոչ մի անհատի չինք։

Միլերան վերջացնում է իր ճառը բուռն ծափահարութիւնների եւ օվացիաների մէջ։

Այդ ճառերին հետեւեց մրցանակաբաշխութիւնը։ Հեռագիրը ձեզ արդէն հաղորդել է անուշտ, թէ ովքեր են արժանացել մրցանակների։—Հանդէսը վերջացաւ «Marseillaise»-ով. Նախագահը հեռացաւ բուռն համակրական ցոյցերի ուղեկցութեամբ։ Բայց այդ նշանաւոր տօնը դրանով չը վերջացաւ։ Կառավարչական եւ այլ հաստատութիւններ այդ հանդէսի առիթով փակ էին. թէ նրանք եւ թէ մասնաւոր շինութիւններ զարդարված էին դրօշակներով։ Իսկ երեկոյեան լուսավառութիւն էր։ Ցուցահանդէսը ներկայացնում էր մի հրաշալի տեսարան. դա մի ֆէէրիա էր, ուր հարիւրաւոր գոյներ եւ պատկերներ, իրար հետ խառնվելով, կազմում էին մի աննկարագրելի ամբողջութիւն։ Տպաւորութիւնը չլացուցիչ էր։ Լուսաւորված էին Սենի ափերին գտնվող բոլոր շինութիւնները, ցուցահանդէսի բոլոր պավիլիոնները, Էյֆէլեան վիթխարի աշտարակը ոտքից մինչեւ իր սուր գագաթը, եւ այդ ամենը գոյնզգոյն լապտերներով. նոյնպիսի լապտերներով լուսաւորված էին Սենի վրա երթեւեկող բոլոր նաւերը։ Աւելցրէք դրա վրա բենգալեան կրակները եւ հրախաղութիւն... Հազար ու մի գիշերներից մէկը։

Այդպէս հրավառված՝ Պարիզը կարծես ներկայացնում էր մի հսկայական փարոս, որ ճիգ էր թափում ճեղքել անհուն մթնոլորտը եւ լոյսի մի քանի ճաճանչներ հացնել մթութեան մէջ դեռ խարխափող ազգերին, լուսաւորել նրանց անցնելիք իսկական ճանապարհը... Նա ձայն էր տալիս, նա կոչ էր անում ամբողջ մարդկութեանը,—կոչ խաղաղութեան, կոչ եղբայրութեան, կոչ հաւասարութեան։

Ս. Շիսեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Բազմավէպի» վերջին տետրակում կարդում ենք. «Մարգարիտա սգաւոր թագուհին արդ ճանապարհորդութեանց մէջ է։ Դեռ հաղիւ Վենետիկ հասած էր, ընդունեցաւ միաբանութեանս Արհի Պետին ցաւակցութեան այցելութիւնը. եւ մի եւ նոյն ժամանակ՝ թագուհին անձամբ խնդրեց մեր Վեհէն, որ գայ ի ս. Ղազար իր Ումպերտոյին հոգւոյն համար պատարագ տենէ։ Գեր. աբբահայրնիս՝ սիրով յանձն առաւ թագուհւոյն այդ փափաքն, եւ երկրորդ օրը (16/8) միաբանութեանս տաճարին մէջ պատարագեց գեր. աբբահայրն ի ներկայութեան թագուհւոյն եւ Վիլլա Մարինայի։ Պատարագէն վերջը ննջեցելոց պաշտօնը կատարվեցաւ. թագուհին առնական ուժով, ինչպէս միշտ՝ նոյնպէս նոյն ատեն՝ զսպեց իր արտասուքն։ Եկեղեցիէն դուրս ելնելէն յետոյ, խմբագրութիւնս թագուհւոյն նուիրեց ներկայ «Բազմավէպ»-ս՝ փառաւոր թղթի վրա տպագրուած։ Թագուհին շատ շնորհակալ եղաւ եւ երբ տեսաւ որ նոյն իսկ իր աղօթքը թարգմանուած եւ տպուած է «Բազմավէպ»-ին մէջ, շատ ուրախացաւ»։

—Ինչպէս հաղորդում են «Բիւրակնին», Երուսաղէմի ս. Յակոբեան միաբանութեան ձեռագրատանը կայ Լազարեան ճեմարանի 885 թ. գրչագիր աւետարանից 285 տարիով հին ձեռագիր աւետարան։

—«Новости» լրագրին հեռագրում են Լօնդոնից. «Մի քանի դեսպաններ եւ աւստրիական դեսպանատան խորհրդական Բօստհօրն (իր կնոջ հետ) Պեկինից գնացին Տեանձին»։

—Նիցչէ թողել է 160 ձեռագիր, որոնցից 51 փիլիսօփայական եւ 66 ընդհանուր հարցերի մասին։

—«Temps» լրագրի թղթակիցը հաղորդում է հետեւեալ տեղեկութիւնը Բելգրադից։ Ալէքսանդր թագաւորի անակընկալ ամուսնութիւնից առաջ՝ ծրագիր կար ամուսնացնելու նրան իշխանուհի Ալէքսանդրա Շաումբուրգ Լիպպէյի հետ։ Դուրս է գալիս, որ այդ ծրագիրը կապված էր քաղաքական մի ամենանշանաւոր հարցի հետ։ Ծրագիրը պատրաստել էր Միլան, երեքպետեան դաշնակցութեան ներկայացուցիչների հետ միասին եւ աջակցութեամբ բարօն Վեկկեր—Գոտէրի՝ Բելգրադի գերմանական դեսպանի։ Ամուսնանալով իշխանուհի Ալէքսանդրայի հետ՝ սերբական թագաւորը դրա հետ միասին, իբրեւ օժիտ իր կնոջ, պէտք է իւրաքանչիւր տարի մէկ միլիոն ֆրանկ ստանար գերմանական Վիլհելմ եւ աւստրիական Ֆրանց-Յովսէփ կայսրներից։ Այդ խոշոր օժիտի փոխարէն Ալէքսանդր թագաւորը պէտք է ստորագրէր մի դաշնագիր, որով Սերբիան միանար երեքպետեան դաշնակցութեան։ Ծրագիրը խորտակվեց թագաւորի որոշմամբ ամուսնանալու Դրագա Մաշինի հետ։ «Temps» կարծիք է յայտնում, որ Բելգրադի ռուսական լիազօր Մանսուրով, ժամանակից առաջ տեղեկութիւն ստանալով այդ ծրագրի մասին, իր կողմից աշխատեց արգելք դառնալ նրան եւ հէնց այդ պատճառով Ռուսաստանը պաշտպան հանդիսացաւ սերբական թագաւորին նրա ամուսնութեան ժամանակ մի անյայտ այրի կնոջ հետ։

—«Neue Freie Presse» հաղորդում է, թէ անգլիացիները արտաքսեցին Տրանսվալից բազմաթիւ գերմանացիների, աւստրիացիների, ֆրանսիացիների եւ այլ եւրոպացիների, որոնք վաղուց բնակութիւն էին հաստատել այնտեղ։ «Հազիւ թէ կարելի լինի կասկածել—ասում է լրագիրը—որ Անգլիան ի չարը գործ դրեց աշխարհակալի իրաւունքը եւ ոտնակոխ արեց միջազգային օրէնքները։ Անկասկած է նոյնպէս, որ աքսորականները իրաւունք ունեն պահանջել բաւարարութիւն եւ վնասների հատուցումն։ Չէր կարելի սպասել, որ Անգլիան այնքան խստասիրտ կը լինի, որ կաքսորէ մարդկանց առանց մինչեւ անգամ ժամանակ տալու, որ նրանք հոգան իրանց հագուստի, կերակրի եւ գոյքի մասին, կաքսորէ, նստեցնելով նրանց կենդանիների տեղափոխութեան համար յատկացրած վագոնները։ Աքսորականներից շատերը զրկվել են իրանց ամբողջ գոյքից եւ կարողութիւնից»։

—«Figaro» լրագրին հաղորդում են Լօնդոնից, թէ դաշնակից զօրքերը շուտով կը հեռանան Պեկինից եւ կը հաւաքվեն Տեանձինում, որտեղ պէտք է գան նոյնպէս խաղաղութեան բանակցութիւններ սկսելու համար լիազօրներ թէ Չինաստանի եւ թէ օտար պետութիւնների կողմից։ Նոյն լրագրի ասելով՝ այն պետութիւնները, որոնք երկաթուղիներ ունեն Չինաստանում, մտադիր են նրանց պաշտպանութեան համար մշտական զօրքեր պահել որոշեալ կէտերում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

24 օգոստոսի

ՇԱՆԳՀԱՅ։ Ցղեանսու նահանգի նահանգապետը 5000 մարդուց բաղկացած ոյժով եկաւ Շանդուն նահանգի սահմանի վրա, բայց երբ տեղեկութիւններ ստացվեցին, որ Պէկինը գրաւել են եւրոպացիները, նրա զինուորներից շատերը փախան. զօրքերի մնացած մասը գնում է դէպի արեւմուտք եւ կը միանայ այրի կայսրուհու հետ։ Աւստրիացիները պատրաստվում են ափ իջեցնել 50 մարդ։

ԼՕՐԵՆՑՕ-ՄԱՐԿԵԶԻ։ Այստեղ բերված են 31 արկղ ոսկէ ձուլածուներ, որոնք պատկանում են Տրանսվալեան կառավարութեան։—Կրիւգէր երեւի դուրս կը գայ Տրանսվալից Ինկօմատիի վրայով, ուր, ասում են, պատրաստված են երկու նաւեր՝ նրան դեսա-

բերանում կանգնած չոգենաւը տանելու համար։ —Աւստրիական Լլոյդի չոգենաւը եկաւ Լօրենցօ-Մարկեզէ 50։000 պարկ ալիւրով տրանսվալեան կառավարութեան համար։

ՀՕՆԳԿՕՆԳ։ Կանտոնում անկարգութիւնները սաստկանում են։ Տեղացիների այն կրպակները, որտեղ վաճառվում են օտարերկրեայ ապրանքներ, ենթարկվեցին յարձակման։ Ամենքն էլ ահ ու դողի մէջ են։

ՏԵԱՆՋԻՆ։ «Մեծ-բռունցքի» չորս նշանաւոր անդամներ գլխատվեցին այսօր. երկուսին Նբրանցից մաս-մաս արին ֆրանսիացիները, իսկ երկուսին գլխատեցին եապօնացիները։

ՏԱԿՈՒ։ Շուտով մի արշաւախումբ ճանապարհ կընկնի դէպի Պաօտինֆու, որ հարիւր մղոն հեռու է Տեանձինից, մաքրելու այն գիւղերը, որտեղ բռունցքամարտներն առաջին անգամ սկսեցին անկարգութիւններ անել։—Ասում են, թէ Լի-Խունգ-Զանգի հրամանով, չինական զօրքերը կոտորում են բռունցքամարտներին Խունանի եւ Ջժիլիի նահանգներում։—Ռուսները մտադրվում են բանալ երկաթուղային երթեւեկութիւն դէպի Պեկին։

ԲԵՐԼԻՆ։ Ցղեանչժօուի նահանգապետը հաղորդում է Ցզինտաուից, որ 20 մարդուց բաղկացած գերմանական պահակախումբը ենթարկվեց 400 կամ 500 բռունցքամարտներից կազմված մի զօրաբաժնի յարձակման։ Յարձակվողները կորցրին 40 մարդ, այն ինչ գերմանացիները ոչ մի կորուստ չունեցան։

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ։ Ստացված է հետեւեալ հեռագիր Տրոմզէյից. «Stella polare» տան եւ մէկ ամիս գտնվում էր սառուցներում։ Նաւի մի կողմը ներս է ընկել. մեքենան նոյնպէս վնասված է։ Արշաւախումբը հասել է մինչեւ 86' 33", հետեւաբար աւելի հիւսիս քան Նանսէն, որ հասել էր 86' 14"։ Արշաւախումբի մասնակցողները տանջվել են քաղցից. Նբրանք կերակրվելիս են եղել շան մսով։ Վախճանվել են մի նօրվեգիացի մեքենապետ եւ երկու խալասի։

ՊԱՐԻԶ։ Գեներալ Ֆրէյ հեռագրում է օգոստոսի 11-ից, որ հանգստութիւնը Պեկինում վերականգնված է. բնակիչները վերադառնում են. քաղաքը սկսում է իր սովորական տեսքն ընդունել։ Դաշնակից զօրքերը կազմակերպեցին խուզարկու խումբ 30 կիլոմետր տարածութեամբ քաղաքի շրջապատում, բայց թշնամու ոչ մի զօրաբաժին չէ երեւում։ Երկիրը հանգիստ է մնում. գիւղերում վերսկսվեցին աշխատանքները։

25 օգոստոսի

ԳԼԱՍԳՕ։ Սանիտարական իշխանութիւնների բիւլլետէնում ասված է, թէ ժանտախտից հիւանդանալու նոր դէպքեր տեղի չեն ունեցել եւ այն անձերից, որոնք գտնվում են բժշկական հսկողութեան տակ, երկուսը արձակված են։ Ենթադրում են, որ չուտով կաջողվի բոլորովին ոչնչացնել հիւանդութիւնը։

ՇԱՆԳՀԱՅ։ Անգլիացիները, առանց նախապէս տեղեկացնելու, ափ իջեցրին 700 սիկերին, 350 սապէգներին եւ հնդկական հեծելազօրքի 118 մարդկանց. վերջինները չապով գնում են Տակու.—Լիխունգչանգին ստիպողաբար կանչում են Պէկին։ Չինական պաշտօնեաներն ասում են, որ եթէ նա չը հետեւի այդ կոչին, կայսրութիւնը վտանգի մէջ կը լինի։

ԲԵՐԼԻՆ։ Կրէյսերեան նաւատորմի երկրորդ ծովապետը Տակուի մէջ հաղորդում է Պէկինից, որ օգոստոսի 15-ին զօրքերն անցան պալատի միջով։ Զօրքերը մտան հարաւից, իսկ դուրս եկան հիւսիսից։ Զօրքերը անցնում էին ընդունելութեան դահլիճներով, որոնք կեղտոտ եւ դատարկ սենեակների տպաւորութիւն էին գործում. դրանց մէջ թանգագին իրեր չը կային։ Վերջը պալատը փակվեց։ Լուրերին նայելով, կայսրուհին փախել է միայն օգոստոսի 2-ին, առաւօտեան։

ՍՕՖԻԱ։ «Բոլգարական գործակալութիւնը» հերքում է, թէ առեւտրի մինիստր Նաչեվիչ յայտնել է, որ իբր թէ բոլգարական կառավարութիւնը պատրաստ է դատ բանալ Միխայիլեանի սպանութեան մէջ մասնակցող մեղադրվողների դէմ, չը սպասելով դատարանի վճռին։ Գործակալութիւնը աւելացնում է, որ հէնց գործն սկսվելու րոպէից բոլգարական կառավարութիւնը յայտնեց, որ դատ կը սկսէ մեղադրվողների դէմ, հէնց որ նրանց յանցանքի բաւարար ապացոյցները կը ստանայ։

ԼՕՆԴՕՆ։ Երեկոյեան լրագիրներում հրատարակված է մի հեռագիր Հօնկկոնգից, օգոստոսի 24-ից, որով հաղորդվում է, թէ նայելով Լի-Խունգ-Զանգի քարտուղարի խօսքերին, օգոստոսի 25-ին Լի-Խունգ-Զանգ Շանդհայից գնում է Պեկին։ Քարտուղարը աւելացրեց, թէ Լի-Խունգ-Զանգ տեղեկութիւն է ստացել, որ դաշնակիցները հետզհետէ վերադարձնում են չինացիներին Պեկինի կառավարութիւնը եւ որ Ցին նշանակված է կայսերական քաղաքամասի կառավարիչ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գիշերը այրվեց «Արկաղիա» զբօսավայրը. թատրոնը ազատված է. մարդկային զոհեր չը կան։

ԷՎԷԴԻՆ։ Այստեղ հասաւ ձկնորս Գէրն Բերգենից հիւանդութեան կասկածելի նշաններով. մի մարդ առանձնացրած է, իսկ չոգենաւը ախտահանված։ Բժիշկների հսկողութեան են յանձնված էլի երկու հիւանդներ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

Խմբագրութիւնը չէ կարող օգտվել այն նամակներից, որոնց տակ ստորագրութիւն չը կայ կամ որոնք ստորագրված են խմբագրութեանը անյայտ որ և է անձնաւորութեան անուան և ազգանուան սկզբնատառերով։

Խմբագրութիւնը խնդրում է թղթակիցներից գրել ամեն թերթի մի երեսի վրա, որով մեծ դիւրութիւն կը տան գրաշարներին։

Բաժանորդագրութիւն վերանորոգելիս պէտք է անպատճառ ուղարկել ամբողջ հին բանդէրօլը, որով առաջ ստացվում էր «Մշակ», (ոչ միայն հասցէն, այլ և №-ը)։

Բաժանորդագրի մնացորդը ուղարկելիս պէտք է յիշել, որ դա մնացորդ է և նոյնպէս հետը ուղարկել բանդէրօլը։

ԼԱՆՁԹՈՒԹԻ. Յ. Մակարեանց։ Ստացել ենք. կուղարկենք ըստ պատկանելոյն։

ԲԱԳՈՒ։ Ռ. Յ. II-ը և III-ը չեն տպվի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ի. Ֆ. Պրօսաեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկորդի եւ կրծքի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօսաեվիչ—6—7 ժ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համաձորտրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. Առվանիսեանի—ատամ. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ նրա դիւանատան մէջ 1900 թւի օգոստոսի 28-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Նոյմ-Արսենալնայա փողոցում եղածից մինչեւ Թշկուրօվայի տունը Պանասեվիչա փողոցի վրայ, մօտ 74,00 պագ. ս. 0,42×025 կորվածքով—1749 ր. գումարի։

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան չինարարական բաժնում բոլոր լի օրերը առաւօտեան ժամը 9-ից մինչեւ 3-ը, կէս օրից յետոյ։ 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ նրա դիւանատան մէջ այս տարվայ օգոստոսի 28-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու ջրմուղ խողովակի չինութիւնը այժմ Զավչավադզեվսկայա փողոցում եղածից մինչեւ Կարսելօվայի տունը նոյն փողոցի վրա մօտ 25,00 պագ. սաժ. 0,25×0,16 կորուածքով 570 ր. գումարի։

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան չինարարական բաժնում բոլոր լի օրերը ժամի 9-ից մինչեւ 3-ը։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ նրա դիւանատան մէջ այս տարվայ օգոստոսի 28-ին, ցերեկվայ ժամը 12-ին նշանակված է աճուրդ՝ կապալով տալու ջրմուղ խողովակի չինութիւնը այժմ Նովօ-Արսենալնայա փողոցում եղածից մինչեւ Թշկուրօվայի տունը Պանասեվիչա փողոցի վրայ, մօտ 190,00 պագ. ս. 0,42×0,28 կորվածքով եւ 50,00 պագ. ս. 0,25×0,16 կորվածքով—6780 ր. գումարի։

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանները վարչութեան չինարարական բաժնում բոլոր լի օրերը առաւօտեան ժամը 9-ից մինչեւ 3-ը։ 2—3

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
(Միքայէլեան պրօսպ. տուն Վեցելի)
Կիրակի, օգոստոսի 27-ին
ՏԷՆՕՐ **ԵՐԻՑԵԱՆԸ**
մասնակցութեամբ ԴԷՄՈՒՐԵԱՆԻ եւ խմբի
Կը տայ
ՀԱՄԵՐԳ
Մանրամասնութիւնները աֆիշայում։ 1—1

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
Ս. Պետերբուրգի Ֆրեօբելեան կուրսերը աւարտած
Վ. Ս. ՋՄՇԿԵԱՆԻ
Երեխաների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 26-ից, ուսումը—սեպտեմբերի 1-ից։ Արբինֆի փողոց, տուն № 4. Архивный переулокъ [продолженіе Католической] домъ № 4։ 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ նրա դիւանատան մէջ 1900 թւի օգոստոսի 28-ին, ցերեկվայ ժամը 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Նախկին Շիօեվի (կրուժօկ) տան ճակատը վերանորոգելու աշխատանքները 1124 ռուբլի գումարի։ Շիօեվի տունը գտնվում է Գօլովինսկի պրօսպեկտի վրա։
Կապալին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան չինարարական բաժնում բոլոր լի օրերը, ժամի 9-ից մինչեւ 3-ը։ 1—1

ԴՊՐՈՑ
տիկ. Կատ. Լիսիցեանցի
երկու սեռի մանուկների համար. Միատեղ պարապմունք իր հարազատ երեխաների հետ։ Ընդունելութիւնը՝ սահմանափակված։ Սեպտեմբերից բացվում է նաեւ պանսիօն։ Դիմել—օգոստոսի 26-ից—Բեհբութեան փողոց (Նախկին Սադովայա), սեփ. տ. № 29)։ (Ե.) 19—25

Ատամների եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների
ԲԺ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԿԱՃԿԱՃԵԱՆ
ընդունում է հիւանդներ օգոստոսի 17-ից Երեւանեան հրապարակ, Роиновъ-ի լուսանկարչական գործարանի տակը։ 4—25

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ նրա դիւանատան մէջ, ցերեկվայ ժամը 12-ին, 1900 թւի օգոստոսի 28-ին նշանակված է աճուրդ՝ կապալով տալու ջրմուղ խողովակի չինութիւնը այժմ Օլգինսկայա փողոցում եղածից մինչեւ Բօլշոյի տունը Մոսկովսկայա փողոցի վրա եւ մինչեւ Զավրօվայի տունը Մոսկովսկից պերեուլօկի վրա, մօտ 190,00 պագ. ս. 0,42×0,28 կորվածքով եւ 50,00 պագ. ս. 0,25×0,16 կորվածքով—6780 ր. գումարի։
Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանները վարչութեան չինարարական բաժնում բոլոր լի օրերը առաւօտեան ժամը 9-ից մինչեւ 3-ը։ 2—3

Ուսումնարան եւ Պանսիօն
ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ
(Սօլօլակ, Բէբութովսկայա փողոց (Նախկին Սադովայա) № 46)։
Աշակերտների ընդունելութիւնը սկսվում է օգոստոսի 28-ից։ Ուսումը—սեպտեմբերի 1-ից։ Ուսումնարանում կայ առանձին բաժանմունք փոքրահասակ երեխաների համար (Ե. Հ.) 3—5

II ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
Ա. ԴԵԱԶԿՕՎԱՅԵԱԻ
ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ
Կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի թոյլտուութեամբ՝ այս տարվայ սեպտեմբերին ես բաց եմ անում II կարգի մասնաւոր դպրոց աղջիկների համար եւ ուսումնարան՝ երկու սեռի երեխաներին պատրաստելու միջնակարգ դպրոցների ստորին դասարաններ համար՝ աղջիկների պանսիօնով։ Յայտարարութիւններ մտնելու մասին ընդունվում են ամենայն օր, առաւօտեան 8 ժամից մինչեւ 1-ը, ուսումնարանի շինութեան մէջ, որ գտնվում է Ելիսավետինսկայա փողոցում, բժիշկ Սամոյլովիչի տանը, № 154։ (Հ.) 4—5

Սովորեցնում եւ պատրաստում եմ երկու սեռի անձանց, չորս ամսվայ ընթացքում, լիակատար երաշխաւորութեամբ և, կարեւոր դէպքերում, պարապմունքներ գտնելու համար յանձնարարութիւններ տալով
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ.
Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով։ Առեւտրական թուաբանութիւն։ Գեղագրութիւն. ուսումնասիրութիւն զանազան տեսակ շրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։
Կարելի է տեսնել առաւօտեան 9—10 ժ. եւ երեկոյեան 4—7։ Պարապմունքները սեպտեմբերի 20-ից։ Հասցէ. Սօլօլակ, Գանօվսկայա փողոց, տուն Թամամշեանի, № 26, բնակարան 9։ Սերգէյ Վօս. Աբրահամեանցին։ (Ե. Հ. Շ.) 2—10

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ
յայտնում է ի տեղեկութիւն ծնողների եւ խնամակալների, որ աշնանային ընդունելութեան քննութիւնները կը նշանակվեն սեպտեմբերի առաջին թւերում, որի մասին կը յայտարարվի լրագիրներում առանձին։
5—5 Դիրեկտորի փոխանակ՝ Ա. Եակօվլեվ

ԴՊՐՈՑ
ԵՒ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ե. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
(ԾՆՆԴ. ԳՈՎՀԱՆՋԱՆԵԱՆ)
Ընդունվում են տղայք եւ օրիորդներ եւ պատրաստվում գիմնազիոն, բէալական, վաճառականական եւ այլ միջնակարգ դպրոցներ մտնելու համար։ Ընդունելութիւնը օգոստոսի 22-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից։
Մանկական պարտիզում ընդունվում են 4 տարեկանից։
Садовая [Бебутовская], домъ Шадинова, № 38. 4—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ։
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 30 օգոստոսի (12 սեպտեմբերի) ԺՕՐԺԻ չոգենաւը, սաւապետ ԼԱՆԵՐ. Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին աչքից յետոյ։
Կարանտինի պատճառով ընկերութիւնը չէ կարող երաշխաւորել չոգենաւերի կանոնաւոր ուղեգնացութեան համար Բաթումից։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՈՍՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Հ. Շ.) 4—20

Дозволено цензурою, Тифлисъ. 25 Августа 1900 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.